ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 24.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/40

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի 04.10.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից նյութերը, պարզեց հետևյալը.

1. **«Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Արիկո-Գոռ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 04.10.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ԴԱՀԿ ապահովող ծառայության կարիքների համար տպագիր ծրարների ձեռքբերման նպատակով հայտարարվել է էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ն /այսուհետ նաև՝ Մասնակից/: Մասնակցի կողմից ներկայացված արժեքն եղել է 5, 750, 000 ՀՀ դրամ:

Նույն մրցույթին մասնակցել է նաև «Բլանկիրատ» ՓԲԸ-ն, որի ներկայացված գնային առաջարկը եղել է 4, 750, 000 ՀՀ դրամ»:

Որպես ներկայացված բողոքի առարկա Ընկերությունը նշել է հետևյալը.

«2017թ. սեպտեմբերի 23-ի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի ա/ ենթակետով «Բլանկիրատ» ՓԲԸ-ի հայտը համապատասխանում է սահմանված պահանջներին՝ կայացված որոշումը:

Ընկերության կողմից Բողոքով նշվել են հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները»:

Համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին»:

Տվյալ դեպքում հիմք ընդունելով վերը նշված հոդվածների պահանջները Ընկերությունը ներկայացրել է նույն բողոքը:

Ընկերությունը մեջբերել է նաև հետևյալ իրավանորմերը.

«Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի: Իրավական ակտերում չի թույլատրվում հնացած և բազմիմաստ բառերի արտահայտությունների, պատկերավոր համեմատությունների, այլաբանությունների, չափազանցությունների, փոխաբերական իմաստով բառերի կամ արտահայտությունների, թաքնված ենթատեքստերի, ինչպես նաև օտարալեզու տերմինների անհարկի օգտագործումը: Իրավական ակտում բազմիմաստ բառ օգտագործվելու դեպքում պետք է սահմանվի, թե բառը որ իմաստով է օգտագործվում/.../:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը/.../:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը...»:

Ընկերությունը հավելել է.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշումը նորմատիվային իրավական ակտ է, որի նորմի կիրառությունը պետք է լինի բացառապես օրենքի շրջանակներում, այլ ոչ թե անձնական մեկնաբանությամբ:

Տվյալ դեպքում «Բլանկիրատ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը լրացված են կոպիտ խախտումներով, այն է՝ տուժանքի մասին համաձայնագրում բացակայում է ամիս ամսաթիվը /պարտադիր պահանջ/,

իսկ վճարման համաձայնագրում լրացված է ՀԾՀ դաշտը, որը իրավաբական անձանց դեպքում չի լրացվում»:

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ և 49-րդ հոդվածներով՝ Ընկերությունը Բողոքով պահանջել է.

1.Դադարեցնել ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայության կարիքների համար տպագիր ծրարներ պատուհանով ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. սեպտեմբերի 23-ի թիվ 2 արձանագրությամբ «Բլանկիրատ» ՓԲԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը:

2. Որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը և/կամ Պատվիրատուի և գնահատող հաննաժողովի կողմից «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում կայացված ցանկացած այլ որոշման գործողությունը:

Խորհրդում Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի տնօրեն Արամայիս Գալստյանը և վերջինիս կողմից լիազորված անձ Էմիլ Չատինյանը:

2. <u>ՀՀ ԴԱՀԿ ապահովող ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ստացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, Խորհուրդը 05.10.2017թ. դիմել էր ՀՀ ԴԱՀԿ ապահովող ծառայությանը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ առաջարկելով նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը:

Պատվիրատուն 10.10.2017թ. թիվ ԵԿ-6583 գրությամբ Խորհրդին էր ներկայացրել Բողոքի քննության համար անհրաժեշտ համապատասխան փաստթղթերը, սակայն Բողոքի վերաբերյալ որևէ գրավոր դիրքորոշում վերջինիս կողմից Խորհրդին չէր տրամադրվել:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Ալեքսանդր Խաչատրյանը:

3. **<u>ԳԲԽ-ԷՍ-2017/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի կողմից 04.10.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.09.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունը, «Բլանկիրատ» ՓԲԸ-ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ձևով տպագիր ծրարների գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտեր են ներկայացրել նաև «Բլանկիրատ» ՓԲԸ-ն (ՀՎՀՀ՝ 00804213), և «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ն (ՀՎՀՀ՝ 03523596):

Հանձնաժողովը 23.09.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի «ա» ենթակետով արձանագրել է, որ «Բլանկիրատ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը համաատասխանել է «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերի պահանջներին և գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության 3-րդ կետի «ա» ենթակետով Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Բլանկիրատ» ՓԲԸ-ին:

«Արիկո-Գոռ» ՓԲԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Բլանկիրատ» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը լրացված են նշված փաստաթղթերի օրինակելի ձևերով հաստատված վավերապայմանների կոպիտ խախտումներով, այն է՝տուժանքի մասին համաձայնագրում բացակայում է փաստաթղթի լրացման ամսաթիվը, որն, ըստ բողոքաբերի, հանդիսանում է պարտադիր պահանջ, իսկ վճարման պահանջագրում լրացված է 7-րդ դաշտը՝ վճարողի տնօրենի ՀԾՀ-ն, որն իրավաբական անձանց դեպքում չի լրացվում:

Բողոքի քննության նպատակով 18.10.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ բողոքաբերի կողմից Բողոքով ներկայացված փաստարկը, այն է՝ «Բլանկիրատ» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված տուժանքի մասին

համաձայնագրում մասնակցի կողմից նշված ամսաթվի բացակայությունը, Հանձնաժողովի կողմից համարվել է ոչ էական այն հիմնավորմամբ, որ նույն փաստաթուղթը վերջինիս կողմից սահմանված կարգով հաստատված է եղել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի վրա հստակ նշված է տվյալ փաստաթղթի հաստատման ամիս ամսաթիվը և ժամը, ինչն էլ Հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել: Հետևաբար, հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ Հանձնաժողովը մասնակցի հայտը գնահատել է բավարար:

Ինչ վերաբերում է «Բլանկիրատ» ՓԲԸ-ի հայտում վճարման պահանջագրի 7-րդ դաշտում վճարողի տնօրենի ՀԾՀ-ի տվյալը լրացված լինելու հանգամանքի, ապա Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ այն Հանձնաժողովի կողմից դիտվել է որպես հայտով ներկայացված լրացուցիչ տեղեկատվություն, որի առկայությունը չի կարող հիմք հանդիսանալ հայտը Հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու և մերժելու համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և նույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ նույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ):

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի՝ 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատվել են գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևերը:

«ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացվող վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն նույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

Նշված կարգի համաձայն՝ վճարման պահանջագրի 7-րդ կետով սահմանված «վճարողի ՀԾՀ» վավերապայմանի առկայությունը փաստաթղթում պարտադիր է, ընդ որում, նշված վավերապայմանը լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ:

Խորհուրդն արձանագրում է, որ «Բլանկիրատ» ՓԲԸ-ն իր կողմից հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված կարգով հաստատել է Ընկերության էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը պարունակում է նաև նույն փաստաթղթի հաստատման ամսաթիվը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, հաշվի առնելով, որ համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ինչպես նաև այն

հանգամանքը, որ Ընկերության կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը վավերացված է փաստաթղթի հաստատման ամսաթիվը պարունակող էլեկտրոնային թվային ստորագրությամբ, Խորհուրդը գտնում է, որ նշված փաստաթուղթը բովանդակային առումով ամբողջական է և պարունակում է համաձայնագրի հաստատման ամսաթվի մասին տեղեկատվություն:

Խորհուրդը գտնում է նաև, որ վճարման պահանջագրի 7-րդ կետով սահմանված «վճարողի ՀԾՀ» վավերապայմանը լրացնելով՝ Ընկերությունն ըստ էության ներկայացրել է հավելյալ՝ իրավաբանական անձ հանդիսացող վճարողի համար ոչ պարտադիր տեղեկատվություն, որը չի կարող գնահատվել որպես Ընկերության հայտը մերժելու հիմք, ուստի Հանձնաժողովը, Ընկերության հայտը բավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի կողմից 04.10.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ